ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Լ. Ի. ԲՐԵԺՆԵՎԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

Դեկտեմբերի 17-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հանրապետության գիտությունների ակադեմիայի և ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի համատեղ գիտական նստաշրջանը՝ նվիրված ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի ծննդյան 70-ամյակին։ Նստաշրջանի թեման էր. «ՍՄԿԿ քաղաքականության այժմեական պրոբլեմները ՍՄԿԿ XXV համագումարի որոշումների լույսի տակ»։ Գիտական նստաշրջանը բացեց ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը։ Նա ասաց, որ նստաշրջանը հրավիրվել է այն օրերին, երբ ամբողջ սովետական ժողովուրդը, լենինյան կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, կենսագործում է ՍՄԿԿ XXV համագումարի պատմական որոշումները։ ՍՄԿԿ XXV համագումարը նոր պատմական բնագիծ է դեպի կոմունիզմ ընթացող սովետական հասարակության կյանքում։ Համագումարում Լ. Ի. Բրեժնևի տված հաշվետու զեկուցման մեջ. ՍՄԿԿ Կենտկոմի 1976 թ. հոկտեմբերյան պլենումում նրա արտասանած ճառում արված է մեր երկրում կատարված վիթխարի ստեղծարար աշխատանքի արդյունքների խոր վերլուծությունը, առաջադրված է մոտակա տարիների գործունեության տեսականորեն հիմնավորված ծրագիրը։ Գ. Ղարիբջանյանը նշեց, որ Լ. Ի. Բրեժնևի՝ մեր ժամանակների ամենահեղինակավոր պետական ու քաղաքական գործչի, անվան հետ են անխզելիորեն կապված կոմունիստական շինարարության ասպարեզում սովետական ժողովրդի ձեռք բերած վիթխարի հաջողությունները, միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման համախմբման, մարքս-լենինյան գաղափարների հաղթանակի, մարդկության խաղաղության, անվտանգության և հանգիստ ապագայի համար մղվող անդուլ պայքարը։

Նստաշրջանում «ՍՍՀՄ ժողովուրդների տնտեսական համագործակցության հարցերը ՍՄԿԿ XXV համագումարի որոշումների լույսի տակ» թեմայով զեկուցեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առամբեկյանը։ *Նա նշեց, որ միջհանրապետական կոոպերացման, սովետական ժողովուրդների տնտեսական համագործակցության և փոխօգնության հարցերը միշտ էլ եղել են մեր կուսակցության ուշադրության կենտրոնում։ Դրանց մեծ ուշադրություն նվիրվեց ՍՄԿԿ XXV համագումարում, ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի հաշվետու զեկուցման մեջ։ ՍՄԿԿ XXV համագումարի մշակած միջոցառումների հետևողական իրականացումը կապահովի բոլոր հանրապետությունների և ամբողջ երկրի տնտեսական հզորության աճը և այդ հիման վրա աշխատավորների բարեկեցության զգալի վերելքը։ Է՛լ ավելի կամրապնդվեն հանրապետությունների տնտեսական կապերը և կմեծանա նրանցից յուրաքանչյուրի ներդրումը համապետական խնդիրների լուծման մեջ։*

«ՍՄԿԿ XXV համագումարը համաշխարհային հեղափոխական պրոցեսի արդի էտապի մասին» զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Վ. Ն. Ներկարարյանը։ *Նա նշեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի ակնառու ներդրումը միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման հետագա համախմբման գործում, սոցիալիստական երկրների մերձեցման պրոցեսում, նրանց փոխադարձ կապերի խորացման և զարգացման ասպարեզում։ Արդի դարաշրջանի գլխավոր բովանդակությունը, ասաց զեկուցողը, անցումն է կապիտալիզմից դեպի սոցիալիզմ. այդ համապարփակ պրոցեսը սկսվեց մեծ Հոկտեմբերի հաղթանակի շնորհիվ։*

ՍՄԿԿ XXV համագումարի տեսական ընդհանրացումները, վերջում ասաց Վ. Ն. Ներկարարյանը, որոնք վերաբերում են համաշխարհային հեղափոխական պրոցեսին, ստեղծագործական մարքսիզմի զարգացման մի նոր աստիճան են։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Ա. Բակունցը նստաշրջանում զեկուցեց «ՍՄԿԿ XXV համագումարը և սովետական գիտության հետագա զարգացումը» թեմայով։ Մեր կուսակցությունն ու նրա կենտկոմը,— ասաց նա,— միշտ էլ կարևոր նշանակություն են նվիրել սովետական գիտության զարգացմանը։ Դա հատուկ ուժով ընդգծվեց ՍՄԿԿ XXV համագումարում։ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի զեկուցման մեջ և համագումարի ընդունած «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղությունները» որոշման մեջ արտացոլված է սովետական գիտության հարաճուն դերը, մեծ ուշադրություն է նվիրված նրա հետագա զարգացման հարցերին։ Լ. Ի. Բրեժնևի հաշվետու զեկուցման մեջ հատկապես ընդգծվեց, որ անհրաժեշտ է էլ ավելի կատարելագործել գիտության կառավարումը, լավագույն պայմաններ ստեղծել ժողովրդական տնտեսության մեջ նրա նվաճումների արագ օգտագործման համար։

Նստաշրջանի մասնակիցները մեծ ոգևորությամբ ընդունեցին ողջույնի նամակ՝ հասցեագրված ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևին։

Գիտական նստաշրջանին մասնակցում էր ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Ցա. Ի. Խաչիկյանը։